(Գործառնություն 51293)

# ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**(ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ**
**(ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ))**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**և**
**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ**
**միջև**

**Ամսաթիվ** 15 մայիսի, 2024 թվական

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀՈԴՎԱԾ I - ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ..................... 5
Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը ............................ 5
Բաժին 1.02. Սահմանումներ................................................................. 6
Բաժին 1.03. Մեկնաբանություն ..........................................................15

ՀՈԴՎԱԾ II - ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.................................16
Բաժին 2.01. Գումարը և արժույթը ....................................................16
Բաժին 2.02. Վարկի այլ հիմնական պայմանները ...............................17
Բաժին 2.03. Մասհանումներ .............................................................18
Բաժին 2.04. Մասհանումների լիազորված ներկայացուցիչ..................18

ՀՈԴՎԱԾ III - ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ..................................................18
Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատուն վավերապայմաններ ...............19
Բաժին 3.02. Ծրագրի իրականացման Գրասենյակ ............................ 20
Բաժին 3.03. Գնումներ......................................................................21
Բաժին 3.04. Բնապահպանական և սոցիալական համապատասխանության վավերապայմաններ ............. 21
Բաժին 3.05. Խորհրդատուներ............................................................23
Բաժին 3.06. Հաշվետվությունների հաճախականությունն ու ներկայացման պահանջները .........................................24

ՀՈԴՎԱԾ IV - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ ............................ 30
Բաժին 4.01. Ֆինանսական հաշվառում և հաշվետվություններ .......... 30

ՀՈԴՎԱԾ V - ԿԱՍԵՑՈՒՄ; ԱՐԱԳԱՑՎԱԾ ՄԱՐՈՒՄ ................................ 30
Բաժին 5.01. Կասեցում ...................................................................... 30
Բաժին 5.02. Արագացված մարում ..................................................... 30

ՀՈԴՎԱԾ VI – ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ................................................................................31
Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելու համար սահմանված վավերապայմաններ......................................................31
Բաժին 6.02. Իրավաբանական կարծիք ...............................................31
Բաժին 6.03. Ուժի մեջ մտնելու ձախողման կասեցում .........................................................................31

ՀՈԴՎԱԾ VII -ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ .............................................................32
Բաժին 7.01. Ծանուցումներ ................................................................32

ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ..................................................34

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ....................... 35

ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ........................................................ 39

## ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Վարկառու) և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ (այսուհետ՝ Բանկ) միջև՝ ստորագրված __________, 2024թ.

## ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը հիմնադրվել է հատուկ ծրագրերի համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով, որոնք միտված են խթանելու անցումը դեպի բաց շուկայական միտվածություն ունեցող տնտեսություններ և խրախուսելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները որոշ երկրներում, որոնք հանձնառություն են ստանձնել և կիրառում են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքները,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն նախատեսում է իրականացնել Ծրագիրը, ինչպես նկարագրված է Հավելված 1-ում և որոշակիացված է ստորև, որը մշակված է օժանդակելու Վարկառուին Սիսիան-Քաջարան ճանապարհի հարավային հատվածի կառուցման հարցում, որը հյուսիսային հատվածի և Բարգուշատի թունելի հետ միասին (Սիսիան-Քաջարան ճանապարհ) կազմում է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի մասը (այսուհետ՝ ՀՀՃՄ Միջանցք),

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն հայցել է Բանկի աջակցությունը Սիսիան-Քաջարան ճանապարհի (այսուհետ՝ Ծրագիր) հարավային հատվածի ֆինանսավորման հարցում,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը համաձայնվել է հասանելի դարձնել տեխնիկական համագործակցության միջոցներ (այսուհետ՝ ՏՀ) աջակցելու Վարկառուին Ծրագրի իրականացման հարցում, որը ներառում է Բանկի կողմից կառավարվող և միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային միջոցներ, որոնք ենթակա են կարգավորման համապատասխան Տեխնիկական համաձայնագրերի դրույթներով,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն նախատեսում է վարկային միջոցներ ներգրավել Եվրոպական ներդրումային բանկից (այսուհետ՝ Համաֆինանսավորող կամ ԵՆԲ) 137 միլիոն եվրո գումարի չափով՝ աջակցելու Ծրագրի Մաս 1-ի ֆինանսավորմանը, որը ենթակա է

կարգավորման Վարկառուի և Համաֆինանսավորողի միջև համաձայնագրի դրույթներով, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը համաձայնվել է վերոնշյալի հիման վրա, ի թիվս այլոց, Վարկառուին տրամադրել վարկ 236,000,000 եվրո գումարի չափով՝ համաձայն սույն Համաձայնագրով սահմանված պայմանների:

Այսպիսով, այժմ, կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ I – ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը**

Բանկի՝ 2021թ. նոյեմբերի 5-ի Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում ու կիրառելի են դառնում սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ:

**Բաժին 1.02. Սահմանումներ**

Նախաբանում նշված սահմանումները, եթե այլ բան նախատեսված չէ կամ բովանդակությունը այլ բան չի պահանջում, սույն Համաձայնագրի որ մասում էլ որ օգտագործված լինեն (ներառյալ Նախաբանը և Հավելվածները), ունեն իրենց տրված նշանակությունը, Ստանդարտ պայմաններում սահմանված սահմանումները ունեն իրենց տրված նշանակությունը, իսկ ներքոգրյալ սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունները.

«Փոխկապակցված միջոցառումներ»

նշանակում է Սիսիան-Քաջարան ճանապարհի հյուսիսային հատվածը և Բարգուշատի թունելը կամ դրանց հետ փոխկապակցված այլ միջոցառումներ կամ գործողություններ, որոնք չեն ֆինանսավորվում ՎԶԵԲ-ի կողմից որպես սույն Ծրագրի մաս, բայց որոնք կարևոր են Ծրագրի հաջողության հասնելու համար կամ Ծրագրի համաձայնեցված վերջնաարդյունքների ապահովման համար:

«Թույլտվություն»

նշանակում է ցանկացած հաստատում, համաձայնություն, գրանցում, ներկայացում, նոտարական հաստատում, սերտիֆիկացում, արտոնագրում, թույլտվություն, Կառավարության կողմից լիազորությունների տրամադրում կամ

անհրաժեշտության բացակայության վերաբերյալ հավաստումների տրամադրում, անկախ նրանից տրվել է անմիջապես կամ համարվում է տրված կամ էլ պահված է սահմանված ժամկետում չգործելու պատճառով, ինչպես նաև բոլոր կորպորատիվ, պարտատերերի և բաժնետերերի հավաստումներն ու հաստատումները:

«Կենսաբազմազանության գործողությունների ծրագիր» կամ «ԿԳԾ»

նշանակում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին առնչվող ծրագիր՝ թվագրված 2024 թվականի մարտի 20-ին, որը ներառում է նպատակների և կառավարման միջոցների շարք, ինչպես նաև պլանավորված թիրախներ՝ մեղմացնելու մնացորդային ազդեցությունները՝ կենսաբազմազանության առաջնահերթություններում հասնելու բացարձակ կորստի բացակայության/ բացարձակ օգուտների կամ ՎՉԵԲ-ի առանձահերթություն համարվող կրիտիկական շրջակա միջավայրում, ընդ որում այս ծրագիրը Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության հիման վրա կարող է փոփոխվել:

«Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման ծրագիր»

նշանակում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին առնչվող ծրագիր, որը ներառում է կենսաբազմազանության փոխհատուցման միջոցառումներ, որոնք նախատեսված են կենսաբազմազանության առաջնահերթությունների կամ կրիտիկական շրջակա միջավայրի համար և որոնք ցույց են

տալիս, որ ծրագրի էական մնացորդային ազդեցությունները կենսաբազմազանության վրա հիմնավոր կերպով մեղմացվել են համաձայն ՎԶԵԲ քաղաքականության և այդ ծրագիրը Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության հիման վրա կարող է փոփոխվել:

«Վարկառուի լիազորված ներկայացուցիչ»

նշանակում է ֆինանսների նախարարը որպես Վարկառու, բացառությամբ ինչպես սահմանված է բաժին 2.04-ում:

«ClientNet» նշանակում է Բանկի առցանց պորտալը, որը նախատեսված է Բանկի և իր հաճախորդների միջև տեղեկատվության և փաստաթղթերի փոխանցման համար, ինչպես նաեւ ցանկացած փոխարինող կայք, որի միջոցով Բանկը ժամանակ առ ժամանակ կարող է ծանուցել Վարկառուին:

«Փոփոխությունների կառավարման ընթացակարգ» կամ «ՓԿԸ»

նշանակում է ընթացակարգ, որը սահմանում է, թե ինչպես են գնահատվում հավանական բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգային ազդեցությունները նախագծման ցանկացած փոփոխության առնչությամբ՝ ապահովելու, որ ողջամիտ մեղմման միջոցառումներ ընդունվեն՝ Ծրագրի ցանկացած շեղումները մինիմալացնելու և բացասական ազդեցություններից խուսափելու համար, ինչպես նկարագրված է Վարկային համաձայնագրում:

«Շինարարության փուլ»

նշանակում է Ծրագրի համար Կապալառուի կողմից աշխատանքների իրականացումը, որը հաստատված է Վերահսկող ինժեների կողմից և

ֆինանսավորվելու է Վարկի միջոցներից Հավելված 2-ում ներկայացված պայմաններով:

«Կապալառու» նշանակում է Բաժին 3.03-ի ա) ենթակետի և Բաժին 3.03-ի գ) ենթակետի համաձայն ընտրված ընկերություն՝ իրականացնելու Ծրագրի համար շինարարական աշխատանքներ:

«Թերությունների հայտնաբերման ժամկետ»

նշանակում է Ծրագրի թերությունների մասին ծանուցելու ժամկետ՝ Կապալառուի հետ շինարարական աշխատանքների պայմանագրի պայմաններին համապատասխան:

«Նախագծման փուլ» նշանակում է Ծրագրի համար Կապալառուի կողմից նախագծման փաստաթղթերի նախապատրաստում, որը հաստատվել է Վերահսկող ինժեների կողմից և ֆինանսավորվելու է Վարկի Տրանշ 1-ի միջոցներից Հավելված 2-ում ներկայացված պայմաններով:

«Պատվիրված կատարողականի նկատմամբ պահանջներ» նշանակում է Կատարողականի նկատմամբ պահանջներ 1-ից մինչև 8 և 10 (կամ, եթե պահանջվի, այդ կատարողականի նկատմամբ պահանջներից որևէ մեկը), որը թվագրված է 2019թ. ապրիլին և առնչվում է 2019թ. ապրիլի՝ Բանկի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը:

«Պարտադիր կիրառելիության քաղաքականություն և ընթացակարգեր»

նշանակում է 2017թ. հոկտեմբերի 4-ի՝ Բանկի պարտադիր կիրառելիության քաղաքականությունն ու ընթացակարգերը:

«Բնապահպանական և սոցիալական

գործողությունների ծրագիր» կամ «ԲՍԳԾ»

նշանակում է բնապահպանական և սոցիալական բացասական հետևանքների մեղմման ուղղված ծրագիր և բարելավման միջոցառումներ, որոնց կրկնօրինակը կցված է որպես Հավելված 3, նշելով բնապահպանական և սոցիալական գործունեության ցուցանիշները, չափանիշները, քաղաքականությունը, ընթացակարգերը, կապիտալ ներդրումների իրականացման ժամանակացույցերը, ներառյալ՝ սահմանված կատարողական պահանջներին համապատասխանության հասնելու և պահպանելու միջոցառումները, քանի որ նման պլանը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի կողմից նախնական գրավոր համաձայնության հիման վրա՝ համաձայն 3.04.1 կետի:

«Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում» կամ «ԲՍԱԳ»

նշանակում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատում՝ կապված Ծրագրի և Փոխկապակցված Միջոցառումների հետ, որը համաձայնեցվել է Կողմերի կողմից:

«Բնապահպանական և սոցիալական հաճախորդի տեղեկատվության տարածման փաստաթղթաշրջանառություն »

նշանակում է Վարկառու կողմից կամ Վարկառուի անունից Բանկին ներկայացված գրավոր տեղեկատվություն համաձայն Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման, Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի, Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի, Կենսաբազմազանության գործողությունների ծրագրի, Ոչ տեխնիկական համառոտագրի, Շահառուների ներգրավման պլանի և Վերաբնակեցման շրջանակի, որը նաև պարունակում է տեղեկատվություն

Բնապահպանական և սոցիալական հարցերի առնչությամբ և այդ տեղեկատվության ցանկացած փոփոխության կամ լրացման, որը ընդունելի է Բանկի կողմից:

«Բնապահպանական և սոցիալական օրենք» նշանակում է ցանկացած կիրառելի օրենք կամ կանոնակարգ, որն առնչություն ունի բնապահպանության, աշխատակիցների, համայնքների կամ ծրագրից տուժած անձանց հետ:

«Բնապահպանական և սոցիալական հարց» նշանակում է ցանկացած հարց, որը ենթակա է կարգավորման ցանկացած բնապահպանական և սոցիալական օրենքով, ցանկացած Պատվիրված կատարողականի նկատմամբ պահանջներով կամ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով:

«Բնապահպանական և սոցիալական հարց» նշանակում է ցանկացած հարց, որը ենթակա է կարգավորման ցանկացած բնապահպանական և սոցիալական օրենքով, ցանկացած Պատվիրված կատարողականի նկատմամբ պահանջներով կամ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով:

«Կատարող գործակալություն»

նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

«Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան» կամ «ԲՍԿՊ»

նշանակում է կառավարման պլան, որն առնչվում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին՝ թվագրված 2024 թվականի մարտի 20-ով, որը պարզաբանում է, թե

ինչպես են բնապահպանական և սոցիալական ծրագրի ռիսկերն ու ազդեցությունները կառավարվելու, որոնք որոշվել են Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման միջոցով, մշակվել են Շրջանային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի հիման վրա, ընդ որում այդ պլանը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխվել Բանկի կողմից նախապես գրավոր համաձայնության հիման վրա:

| | |
|---|---|
| «Ֆիսկալ տարի» | նշանակում է Վարկառուի ֆիսկալ տարին, որը սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին: |
| «ԼՄՓ» | նշանակում է Լավագույն Միջազգային Փորձ: |
| «Կառավարական մարմին» | նշանակում է Վարկառուի կառավարությունը կամ ցանկացած քաղաքական ենթաբաժին՝ պետություն, տարածաշրջանային կամ լոկալ միավոր կամ ցանկացած մարմին, մասնաճյուղ, ստորաբաժանում, կանոնակարգող մարմին, դատարան, կենտրոնական բանկ կամ այլ մարմին, որն իրականացնում է գործադիր, օրենսդիր, դատական, հարկային, կանոնակարգող և վարչական գործառույթներ կամ վերաբերվում է կառավարությանը կամ ցանկացած ենթաբաժնին (ներառյալ ցանկացած վերազգային մարմիններ), ինչպես նաև նաև վերոնշյալի բոլոր պաշտոնյաներին, գործակալներին և ներկայացուցիչներին: |
| «Իրականացնող մարմին» կամ | նշանակում է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ[1], որը ստեղծվել է որպես ոչ առևտրային կազմակերպություն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և գործում է ՀՀ տարածքային կառավարման և |

[1] ՀՀ կառավարության 06.08.2021թ. թիվ 1298-Ա որոշմամբ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը հիմնադրի կամավոր գույքային մուծումների հիման վրա ստեղծված շահույթ չհետապնդող կազմակերպություն է: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

ենթակառուցվածքների նախարարության կառավարման ներքո:

«Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու»

նշանակում է բնապահպանական և սոցիալական փորձագետների անկախ թիմ կամ այդպիսի փորձագետների ընկերություն, որը կարող է և ժամանակ առ ժամանակ Բանկի կողմից նշանակվել կամ ընտրվել որպես ՎԶԵԲ-ի անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու և աջակցել Բանկին արտաքին մոնիտորինգն ու հաշվետվությունները կանոնավոր կերպով իրականացնելու գործում:

«Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարություն»

նշանակում է փաստաթուղթ, որը պարունակում է խելացի տրանսպորտային համակարգի տեխնոլոգիաների հնարավոր ներդրման վերլուծություններ և լուծումներ՝ բարելավելու Հայաստանի ողջ տրանսպորտային ոլորտի գործառնական և տնտեսական արդյունքները: Այդ փաստաթուղթը պետք է լինի Բանկի համար բավարար ձևով և էությամբ:

«Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլան» կամ «ՀՁՎՊ»

նշանակում է Բնապահպանական և սոցիալական գործողություններում նշված պլան, որը պատրաստվել է պատասխանատու կառավարման մարմինների կողմից՝ կապված հողի ձեռքբերման և ոչ կամավոր վերաբնակեցման հետ, որտեղ այդ պլանները պետք է լինեն ՎԶԵԲ քաղաքականությանը համահունչ և ներառեն (i) կիրառելի օրենքների և կանոնակարգերի ներքո ապահովվող տեղահանված մարդկանց կարգավիճակների նկարագիր (ii) միջոցներ, որոնք միտված են վերացնելու վերոնշյալ կետում սահմանված տեղահանման մասով առաջացած խնդիրները և (iii) այդ պլանի իրագործման համար կառավարման մարմինների ֆինանսական և

իրականացման պատասխանատվություն, ընդ որում այս պլանը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի կողմից նախապես գրավոր համաձայնության հիման վրա:

«Վարկատուի տեխնիկական մշտադիտարկող» նշանակում է Բանկի կողմից նշանակված խորհրդատու՝ Բանկի անունից մշտադիտարկելու Ծրագրի իրականացումը:

«Վարկ» նշանակում է Բաժին 2.01(ա)-ում նշված գումարը:

«Ոչ տեխնիկական ամփոփում» ունի ԲՍԱԳ փաստաթղթերում դրան վերագրված նշանակությունը:

«Վարկի արժույթ» նշանակում է եվրո:

«Շահագործման փուլ» նշանակում է Սիսիան-Քաջարան ճանապարհի օգտագործման ժամկետը շինարարական փուլի ավարտից հետո, որի ժամկետը չի համարվում սկսված մինչև Սիսիան-Քաջարան ճանապարհի վերջին հատվածի շինարարության ավարտը, ինչպես հաստատում են հսկիչ ինժեները և ՏԿԵՆ-ը:

«ԾԻԳ» նշանակում է Բաժին 3.02-ում նշված ծրագրի իրականացման գրասենյակը:

«Գնումների աջակցման խորհրդատու» նշանակում է գնումների աջակցման խորհրդատու, որը նշանակվելու է Բանկի կողմից՝ աջակցելու Իրականացնող մարմնին Կապալառուի և Վերահսկող ինժեների հետ պայմանագրերի գնումների հարցերում համաձայն ՎԶԵԲ Գնումների Կանոնակարգերի:

«Ծրագրի Կառավարման Խորհրդատու» / «ԾԿԽ» նշանակում է Իրականացնող մարմի կողմից ընտրվելիք խորհրդատու համաձայն Բաժին 3.03 բ) ենթակետի, որը աջակցելու է Ծրագրի

իրականացմանը և Փոխկապակցված միջոցառումներին:

«Վերաբնակեցման շրջանակ»
ունի ԲՍԱԳ փաստաթղթերում դրան վերագրված նշանակությունը:

«Ճանապարհային հատվածի աջակցության խորհրդատու»
նշանակում է Բանկի կողմից ընտրված և նշանակված խորհրդատու, որը կօգնի Վարկառուին և Իրականացնող մարմնին (i) Ոլորտային քաղաքականության հայտարարությունը (ii) Ծառայության մակարդակի պայմանագիրը (iii) Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարությունը պատրաստելու և ընդունելու հարցում, ըստ անհրաժեշտության:

«Ոլորտային քաղաքականության փաստաթուղթ»
նշանակում է փաստաթուղթ, որը վերլուծում, բացատրում և ամփոփում է Հայաստանի ճանապարհային ոլորտի հիմնական քաղաքականության ուղղություններն ու բարեփոխումները:

«Ծառայությունների մակարդակի պայմանագիր»
նշանակում է համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) և Իրականացնող մարմնի միջև հարաբերությունների կարգավորման նպատակով:

«Մնացորդների տեղակայման տարածքներ»
նշանակում է որոշակիացված տարածքներ, որտեղ վերջնականապես կուտիլիզացվեն մնացորդային փչացված նյութերը:

«Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան»
ունի ԲՍԱԳ փաստաթղթերում դրան վերագրված նշանակությունը, քանի որ նման պլանը կարող է

ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

«Վերահսկող ինժեներ» նշանակում է Բաժին 3.03 (ա) կետի համաձայն և Բանկի համար ընդունելի կերպքով Իրականացնող մարմնի կողմից ընտրված յուրաքանչյուր խորհրդատու Ծրագրի աշխատանքների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, որը ֆինանսավորվելու է Վարկի միջոցներից համաձայն Հավելված 2-ի:

«ՏՀ ֆինանսավորվող խորհրդատուներ» նշանակում է գնումների աջակցության խորհրդատուներ:

**Բաժին 1.03. Մեկնաբանություն**

Սույն Համաձայնագրում հղումը համապատասխան Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին պետք է ընկալվի որպես հղում սույն Համաձայնագրի այդ կոնկրետ Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին, եթե սույն Համաձայնագրով այլ բան սահմանված չէ:

## ՀՈԴՎԱԾ II – ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Բաժին 2.01. Գումարը և արժույթը**

Բանկը համաձայնվում է սույն Համաձայնագրում սահմանված պայմաններով և կարգով Վարկառուին տրամադրել մինչև 236,000,000 եվրո գումար:

**Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմանները**

(ա) Մասհանման նվազագույն գումարի չափը պետք է լինի.

(i) 1,000,000 եվրո նախագծման փուլում շինարարության պայմանագրով վճարումներ կատարելու նպատակով.
(ii) 5,000,000 եվրո շինարարական պայմանագրով նախատեսված վճարումների իրականացման նպատակով շինարարական և թերությունների հայտնաբերման փուլերի ընթացքում, և
(iii) 200,000 եվրո վերահսկող ինժեներին և ծրագրի ղեկավարման խորհրդատուին վճարումներ իրականացնելու նպատակով համաձայն վերահսկող ինժեների և ծրագրի ղեկավարման խորհրդատուիպայմանագրի:

(բ) Կանխավճարի նվազագույն գումարի չափը պետք է լինի 1,000,000 եվրո:

(գ) Չեղարկման նվազագույն գումարի չափը պետք է լինի 1,000,000 եվրո:

(դ) Տոկոսավճարի վճարման օրերը պետք է լինեն յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը և հուլիսի 15-ը:

(ե) (1) Վարկառուն պետք է վճարի Վարկի 30 (երեսուն) հավասարաչափ (կամ որքան հնարավոր է հավասարաչափ) կիսամյակին վճարումներով յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին: Վարկի առաջին և վերջին հետվճարման օրերը պետք է լինեն 2029թ. հուլիսի 15-ը և 2044թ. հունվարի 15-ը :

(2 ) Չնայած վերոնշյալին, այն դեպքում երբ (i) Վարկառուն 2.02 բաժնի ե) ենթակետով սահմանված Վարկի ամբողջ գումարը մինչև առաջին վճարման օրը չի մասհանել և (ii) Բանկը երկարաձգել է ներքոնշյալ 2.02 բաժնի զ) ենթակետով սահմանված վերջին հասանելիության ժամկետը մինչև այն ամսաթիվը, որը Վարկի առաջին վճարման ամսաթիվը կամ այդ ամսաթվից ավելի ուշ ընկած ամսաթիվ է, այդ դեպքում վարկի առաջին վճարման ամսաթվի կամ դրան հաջորդող ամսաթվի յուրաքանչյուր մասհանման գումարը պետք է տեղաբաշխվի վճարման համար հավասարաչափ մասնաբաժիններով վարկի մարման տարբեր ամսաթվերի միջև, որոնք այդ մասհանումից հետո ընկած ժամանակահատվածում են (Բանկի հետ ճշտելով, որպեսզի հատկացված գումարները հնարավորինս կլորացվի): Բանկը ժամանակ առ ժամանակ ծանուցում է Վարկառուին այդ բաշխումների մասին:

զ) Վարկի վերջին հասանելիության ժամկետը սույն համաձայնագրի ստորագրման 8-րդ տարելիցն է կամ այլ ավելի ուշ ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել և ծանուցել Վարկառուին:

(է) Պարտավճարի չափը տարեկան 0.5% է:

(ը) Վարկը ենթակա է վճարման լողացող տոկոսադրույքով:

**Բաժին 2.03. Մասհանումներ**

ա) Համաձայն 2-րդ Հավելվածի դրույթների՝ Վարկը ժամանակ առ ժամանակ կարող է մասհանվել ֆինանսավորելու Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ողջամիտ արժեքների առնչությամբ կատարված ծախսերը (կամ Բանկի համաձայնությամբ կատարվելիք ծախսերը) և միանվագ կոմիսիոն վճարը:

**Բաժին 2.04. Մասհանումների լիազորված ներկայացուցիչ**

Ֆինանսների նախարարը որպես Վարկառուի լիազորված ներկայացուցիչ ցանկացած գործողության իրականացման համար, որն անհրաժեշտ է և թույլատրված 2.03 բաժնի ենթակետի դրույթներին և Ստանդարտ պայմանների 3.01 և 3.02 բաժիններին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ III – ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

**Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատուն վավերապայմաններ**

Բացի Ստանդարտ Պայմանների Հոդվածներ IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, Վարկառուն պետք է և պետք է ապահովի, որ Իրականացնող մարմինը.

(ա) Ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու ողջամիտ միջոցներ և այլ ռեսուրսներ, այդ թվում նաև մարդկային

ռեսուրսներ, Ծրագիրը ավարտին հասնելու համար, ինչպես նաև իրականացնի Փոխկապակցված միջոցառումները,

(բ) պատասխանատվություն կրել բոլոր անուղղակի և պահվող հարկերի և տուրքերի համար (ներառյալ, առանց սահմանափակման, ցանկացած մաքսատուրք), եթե կիրառելի է) բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (ներառյալ խորհրդատվական ծառայությունները), որոնք ձեռք են բերվել Ծրագրի համար կամ նախատեսում են դրանց փոխհատուցումը և հետագա պայմանով, որ ոչ մի դեպքում Վարկի միջոցները և տեխնիկական համագործակցության միջոցները չպետք է օգտագործվեն Ծրագրի համար գնվելիք բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (ներառյալ խորհրդատվական ծառայությունները) այլ հարկերի ֆինանսավորման կամ վճարման համար.

(գ) իրականացնել Ծրագիրը, ինչպես նաև Փոխկապակցված միջոցառումները, պատշաճ կերպով և արդյունավետորեն, համաձայն հաջողված ինժեներային, ֆինանսական և բիզնես փորձի, բոլոր կիրառելի օրենքներին համահունչ և ընդունելի միջազգային ստանդարտներին և փորձին համապատասխան, բնապահպանական, աշխատանքային, առողջապահական և անվտանգային նորմերին համապատասխան,

(դ) ապահովել, որ Փոխկապակցված միջոցառումների համար բոլոր պայմանագրերը, ներառեն համապատասխանության պահանջ Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին, ինչպես նաև համապատասխանություն Պատվիրակված կատարողականի նկատմամբ պահանջներին և GIP-ին: Այս հանձնառությունը պետք է նաև ներառի պարտավորություն՝ մշակելու Փոխկապակցված միջոցառումների համար Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ, որոնք հատուկ լինեն տվյալ տեղանքներին: Ընդ որում, դրանք պետք է համապատասխանաբար հաստատված լինեն Սիսիան-Քաջարան ճանապարհի յուրաքանչյուր հատվածի համախատասխան Վերահսկող ինժեների կողմից և հավասարապես նաև Ծրագրի կառավարման խորհրդատուի աջակցությամբ Ծրագրի իրականացնողի կողմից՝ ապահովելու Պատվիրակված կատարողական նկատմամբ պահանջները և GIP-ի պահանջները,

(ե) ապահովել Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանի հաստատումը և Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանի իրականացման ավարտը՝ հավաստված ESP PR5 չափանիշներով Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանի ավարտական աուդիտի միջոցով՝ պատրաստված Արտաքին վերաբնակեցման մշտադիտարկողի կողմից և Բանկի համար ընդունելի ձևով, որը պետք է նախորդի ծրագրի համապատասխան հատվածների աշխատանքների մեկնարկին,

(զ) ապահովել, որ Ծրագրի հաշիվները աուդիտի ենթարկվեն Բանկի կողմից ընդունելի անկախ աուդիտորի կողմից,

(է) ապահովել, որ Բարգուշատի թունելի կապալառուի կողմից աշխատանքների մեկնարկի պահից սկսած, մշտապես, այդ կապալառուն ապահովի այլընտրանքային հասանելի ճանապարհ և ուղիներ՝ անկախ Ծրագրի աշխատանքների և շինարարության տեղանքներից՝ Երթևեկության կառավարման պլանին համահունչ և չխաթարելով Ծրագրի ընթացքը,

(ը ապահովել Ոլորտային քաղաքականության փաստաթղթի նախապատրաստումն ու հաստատումը ոչ ուշ, քան 2027թ. հունիսի 30-ը՝ Բանկի կողմից նշանակված ճանապարհային ոլորտի աջակցության խորհրդատուի օգնությամբ և ներգրավմամբ,

(թ) ապահովել Ծառայությունների մակարդակի պայմանագրի նախապատրաստումը ոչ ուշ, քան 2027թ. հունիսի 30-ը՝ Բանկի կողմից նշանակված ճանապարհային ոլորտի աջակցության խորհրդատուի օգնությամբ և ներգրավմամբ,

(ժ) ապահովել Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարության պատրաստումն ու հաստատումը ուշ, քան 2027թ. հունիսի 30-ը՝ Բանկի կողմից նշանակված ճանապարհային ոլորտի աջակցության խորհրդատուի օգնությամբ և ներգրավմամբ, և

(ի) ապահովել Ոլորտային քաղաքականության փաստաթղթում ներկայացված 3 (երեք) առանցքային առաջարկությունների իրականացումը (որոնք ներկայումս կներառեն առաջարկություններ ճանապարհների պահպանման, ճանապարհների անվտանգության և ակտիվների կառավարման ոլորտներում)ոչ ուշ, քան 2029թ. հունիսի 30-ը:

**Բաժին 3.02. Ծրագրի իրականացման գրասենյակ**

Եթե այլ բան նախատեսված չէ Բանկի հետ, Վարկառուն պետք է ստեղծի և Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում գործողության մեջ պահի ծրագրի իրականացման գրասենյակը համապատասխան ռեսուրսներով և Բանկի համար ընդունել տեխնիկական առաջադրանքի շրջանակներին համապատասխան որակավորված անձնակազմով, որի նպատակը Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտների համակարգումը, կառավարումը, մշտադիտարկումն ու գնահատումն է, ներառյալ Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների գնումների իրականացումը:

**Բաժին 3.03. Գնումներ**

Վարկից ֆինանսավորվող և Ծրագրի իրականացման համար պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունները, պետք է կառավարվեն Ստանդարտ պայմանների 4.03 բաժնի դրույթներով այդ բաժնի նպատակների համար, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ.

ա) Ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունները (բացի խորհրդատվական ծառայություններից, մնացածը ներառված են Ստանդարտ պայմանների 3.03 բաժնի բ) կետում) գնումները պետք է իրականացվեն բաց մրցույթների միջոցով,

բ) Ծրագրի կառավարման խորհրդատուի խորհրդատվական ծառայությունները պետք է կատարվեն բաց մրցույթի միջոցով Ասիական Զարգացման բանկի Գնումների կանոններին համապատասխան,

գ) 3.03 բաժնի ա) ենթակետի նպատակով բաց մրցույթի ընթացակարգերը սահմանված են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Գնումների կանոնակարգի 3-րդ բաժնով,

դ) Բոլոր պայմանագրերը ենթակա են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Գնումների կանոնակարգով սահմանված ընթացակարգերով իրականացման և Բանկի նախնական ուսումնասիրման, բացի Ծրագրի կառավարման խորհրդատուի պայմանագիրը:

**Բաժին 3.04. Բնապահպանական և սոցիալական համապատասխանության վավերապայմաններ**

Առանց սահմանափակելու Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի ա) ենթակետի, 4.02 բաժնի ա) ենթակետի (iii) կետի և 5.02 բաժնի գ) ենթակետի (iii) հիմնադրույթները և քանի դեռ Բանկն այլ բանի հետ չի համաձայնվել.

ա. Բացի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում, Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում, Կենսաազմազանության գործողությունների ծրագրում, Շահառուների ներգրավման պլանում կամ Վերաբնակեցման շրջանակում նշվածներից, Վարկառուն պետք է ապահովի, որ ցանկացած կապալառու Ծրագիրն իրականացնի Պատվիրակված կատարողականի նկատմամբ պահանջներին համապատասխան Բանկի կողմից

ֆինանսավորվող աշխատանքների, ապրանքների, ծառայությունների կամ բիզնես գործունեության մասով:

բ. Բացի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում, Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում, Կենսաազմազանության գործողությունների ծրագրում, Շահառուների ներգրավման պլանում կամ Վերաբնակեցման շրջանակում նշվածներից, Վարկառուն պետք է և պետք է ապահովի, որ ցանկացած կապալառու ապահովի, որ Փոխպակակցված միջոցառումներից առաջացած բնապահպանական և/կամ սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները կառավարվեն ու մեղմացվեն կիրառելի օրենքներին, միջազգային լավագույն փորձին և 1-8 և 10 Պատվիրակված կատարողականի նկատմամբ պահանջներին, ինչպես նաև Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին համապատասխան:

գ. Առանց սահմանափակելու վերոգրյալը, Վարկառուն պետք է պատշաճ կերպով պահպանի և իրականացնի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը, Կենսաբազմազանության գործողությունների ծրագիրը, Շահառուների ներգրավման պլանը, Վերաբնակեցման շրջանակը և Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանը և մշտադիտարկի այդ պլանները այդ ծրագրերում պարունակվող դրույթներին համապատասխան:

դ. Վարկառուն, Իրականացնող մարմնի միջոցով և Ծրագրի կառավարման խորհրդատուի աջակցությամբ, իր ծախսերով, պետք է իրականացնի Կապալառուի առնվազն երկու առանձին աշխատանքային աուդիտ, այդ թվում նաև կապալառուի բոլոր ենթակապալառուների, որ պետք է իրականացվի Վարկառու կողմից նշանակված և Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքի հիման վրա անկախ արտաքին փորձագետի կողմից, որը միտված է որոշակիացնելու Կապալառուի և իր բոլոր ենթակապալառուների համապատասխանությունը Կատարողականի պահանջ 2-ին և այդ աուդիտի արդյունքները պետք է ներկայացվեն Բանկին: Առաջին աշխատանքային աուդիտը պետք է իրականացվի, երբ Կապալառուի հիմնական աշխատուժը մոբիլիզացված է և երկրորդ աշխատանքային աուդիտը պետք է իրականացվի Շինարարության փուլի ամենաեռուն շրջանում:

ե. Վարկառուն և Բանկը ժամանակ առ ժամանակ կարող են համաձայնության գալ փոփոխելու Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը, Շրջանային բնապահպանական և սոցիալական կառվարաման պլանը, Կենսաբազմազանության գործողությունների ծրագիրը, Շահառուների ներգրավման պլանը և Հողի ձեռքբերման և

վերաբնակեցման պլանը, որը կարող է կատարվել Վարկառուի կամ Ծրագրին առնչվող որոշակի հանգամանքներից, չնախատեսված իրավիճակներից և մոնիթորինգի արդյունքներից ելնելով: Չսահմանափակելով վերոգրյալի ընդհանրականությունը.

(1) եթե առկա է ցանկացած ոչ բարենպաստ բնապահպանական կամ սոցիալական ազդեցություն, որը նախատեսված չի եղել Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում, Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում, Կենսաբազմազանության գործողությունների ծրագրում, Շահառուների ներգրավման պլանում և Վերաբնակեցման շրջանակում կամ ամբողջությամբ կամ ըստ իր ծանրության աստիճանի,

(2) եթե Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում, Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում, Կենսաբազմազանության գործողությունների ծրագրում, Շահառուների ներգրավման պլանում և Վերաբնակեցման շրջանակում ցանկացած ազդեցության նվազեցման միջոց բավարար չէ կրճատելու Պատվիրակված կատարողականի նկատմամբ պահանջներին համապատասխան բնապահպանական կամ սոցիալական ազդեցությունը, որը սահմանված է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում, Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում, Կենսաբազմազանության գործողությունների ծրագրում, Շահառուների ներգրավման պլանում և Վերաբնակեցման շրջանակում, կամ

(3) եթե Բաժին 3.04 դ ենթակետի համաձայն Վարկառուի, Բանկի կամ ցանկացած վերահսկող կամ կանոնակարգող մարմնի կամ աուդիտի կողմից պարզվել է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի կամ ցանկացած Բնապահպանական և սոցիալական օրենքի հետ ցանկացած նյութական անհամապատասխանություն,

Վարկառուն, ողջամիտ շուտափույթ ժամկետում, որը ենթակա է հաստատման Բանկի կողմից, պետք է մշակի և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում, Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում, Կենսաբազմազանության գործողությունների ծրագրում, Շահառուների ներգրավման պլանում և Վերաբնակեցման շրջանակում ներառի այդպիսի լրացուցիչ կամ լրամշակված միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կլինեն ապահովելու համապատասխանությունը Պատվիրակված կատարողականի նկատմամբ

պահանջներին, Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին կամ Բնապահպանական և սոցիալական օրենքներին, յուրաքանչյուր դեպքում Բանկի կողմից բավարար ձևով:

զ. Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման պլանը պետք է մշակվի ՎԶԵԲ-ի քաղաքականությանը համահունչ և հաստատվի Վարկառուի կողմից Շինարարության փուլի մեկնարկից նվազագույնը երեք ամիս առաջ:

է. Ճանապարհի՝ մինչ գործարկումը իրականացվող անվտանգության աուդիտը պետք է ավարտվի Շահագործման փուլի մեկնարկից առնվազն երեք ամիս առաջ՝ հաստատելով, որ ճանապարհային անվտանգության բոլոր ընդունված առաջարկությունները իրականացվել են համաձայն մանրամասն նախագծի մինչ ճանապարհի շահագործումը:

**Բաժին 3.05. Խորհրդատուներ**

ա) Եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, Ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով Վարկառուն պետք է պահանջվող ձևով վարձի և աշխատի խորհրդատուների հետ, որոնց որակավորումները, աշխատանքային փորձը և տեխնիկական առաջադրանքները ընդունելի են Բանկի կողմից, ներառյալ

1. Ծրագրի կառավարման խորհրդատու՝ ներգրավված 3.03(բ) բաժնի համաձայն,

2. Վերահսկող ինժեներ

3. ԾԻԳ-ին աջակցելու և աջակցություն ցուցաբերելու ցանկացած այլ խորհրդատու:

բ) Վարկառուն անվճար պետք է ապահովի խորհրդատուներին (ներառյալ Բանկի կողմից ուղղակիորեն նշանակված ՏՀ ֆինանսավորման խորհրդատուները), որոնք ներգրավված են Ծրագրին առնչվող հարցերում և Վարկառուի գործողություններում, սարքավորումներով և աջակցի իրենց գործառույթների իրականացման գործում (ներառյալ գրասենյակային տարածքի և ֆոտոպատճենահանող սարքավորումների տրամադրումը, քարտուղարական ծառայություններ և տրանսպորտ, այնքանով, որքանով նման գործողությունների հետ կապված ծախսերը դեռևս չեն պահանջվում ծածկել և իրականում ծածկված են խորհրդատուների համապատասխան ֆինանսական առաջարկներով),

ինչպես նաև բոլոր փաստաթղթերի, նյութերի և այլ տեղեկատվության տրամադրումը, որը կարող է առնչվել իրենց աշխատանքին:

**Բաժին 3.06. Հաշվետվությունների հաճախականությունը և ներկայացման պահանջները**

(ա) Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև վարկի ամբողջական մարումը կամ չեղարկումը, Վարկառուն Բանկին պետք է և պարտավոր է ապահովի, որ Իրականացնող մարմինը և (կամ) Կատարող գործակալությունը ներկայացնի Նախագծման փուլում կիսամյակային հաշվետվություններ, Շինարարության ընթացքում եռամսակային հաշվետվություններ և Շահագործման փուլում Բնապահպանական և սոցիալական հարցերին առնչվող տարեկան հաշվետվություններ Վարկառուի և Ծրագրի հարաբերությունների մասով, ներառելով նաև Փոխկապակցված միջոցառումները , ինչպես նշված է Ստանդարտ պայմանների 5.02 կետի գ) ենթակետի գ) մասում, երբ յուրաքանչյուր դեպքում հաշվետվությունները պետք է ներկայացվեն եռամսյակի ավարտից հետո 30 օրվա ընթացքում,կիսամյակ-տարեկան ժամանակահատվածից հետո 45 օրվա ընթացքում և հաշվետու տարվանից հետո 60 օրվա ընթացքում:
Նշված հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ առանձնահատուկ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն.

(1) Պատվիրված կատարողականի նկատմամբ պահանջներին Վարկառուի համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը, որը նկարագրված է 3.04 բաժնի ա) ենթակետում և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում;

(2) տեղեկատություն առ այն, թե ինչպես է Վարկառուն մշտադիտարկել Ծրագրում ներգրավված ցանկացած կապալառուի համապատասխանությունը Պատվիրված կատարողականի նկատմամբ պահանջներին և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին և այդ կապալառուի կողմից Պատվիրված կատարողականի նկատմամբ պահանջների և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի ցանկացած նյութական անհամապատասխանության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, ինչպես նաև իրականացված ցանկացած գործողություն՝ ուղղելու այդ անհամապատասխանությունը;

(3) Պատվիրված կատարողականի 10-րդ պահանջին համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ ցանկացած ստացված դժգոհության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն և այդ դժգոհությունների լուծման արդյունքները;

(4) Ծրագրին և Փոխկապակցված միջոցառումներին առնչվող Վարկառուի՝ բնապահպանական և սոցիալական օրենքներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ Վարկառուի նկատմամբ սկսված ցանկացած պահանջի, վարույթի, կարգադրության կամ հետաքննության նկարագրություն, Ծրագրի համար պահանջվող ցանկացած լիազորության առկա դրությունը, ցանկացած կանոնակարգող մարմնի կողմից ցանկացած ստուգման արդյունքները, կիրառելի օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների ցանկացած խախտում և այդ խախտման հետ կապված ցանկացած անմիջական գործողություն կամ տուգանք, ցանկացած նյութական ծանուցման համառոտ նկարագրություն, հաշվետվություն և այլ տեղեկատվության փոխանցման ձև, որն առնչվում է Ծրագրի և Փոխկապակցված միջոցառումների բնապահպանական և սոցիալական հարցերին՝ ներկայացվելով Վարկառուի կողմից ցանկացած կանոնակարգող մարմնի և այլ ցանկացած հանգամանքների առնչությամբ, որոնք Վարկառուին պատասխանատվության կենթարկեն բնապահպանական և սոցիալական հարցերի առնչությամբ;

(5) աշխատանքային առողջապահության և անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն և Ծրագրի և Փոխկապակցված միջոցառումների աշխատանքային առողջապահության և անվտանգության վերաբերյալ հաշվառում, ներառյալ դժբախտ պատահարների ցուցանիշները, կորցրած ժամանակի միջադեպերը և համարյա-կորցրածները, Վարկառուի կողմից ձեռնարկված կամ պլանավորված ցանկացած կանխարգելիչ կամ մեղմացուցիչ միջոցառում, աշխատանքային առողջապահության և անվտանգության վերաբերյալ անձնակազմի վերապատրաստումներ և աշխատանքային առողջապահության և անվտանգության կառավարման հետ կապված ցանկացած այլ նախաձեռնություններ, որոնք իրականացվում կամ նախատեսվում են Վարկառուի կողմից;

(6) Ծրագրի վրա նյութական հնարավոր ազդեցություն ունեցող բնապահպանական և սոցիալական օրենքների ցանկացած փոփոխության համառոտագիր;

(7) Վարկառուի կողմից իր շահառուներին և հանրությանը պարբերաբար ներկայացվող բնապահպանական և սոցիալական հարցերին առնչվող ցանկացած տեղեկատվություն; և

բ) Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, Վարկառուն պետք է ապահովի, որ Ստանդարտ պայմանների 4.04 կետի ա) ենթակետի ն) մասի համաձայն Ծրագրի պարբերական հաշվետվությունները պետք է ներկայացվեն հետևյալ կերպ.

(1) Իրականացնող մարմինը, Ծրագրի կառավարման խորհրդատուի աջակցությամբ, Բանկին պետք է ներկայացնի (i) կիսամյակային հաշվետվություններ՝ Նախագծման փուլի ընթացքում յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 45 օրվա ընթացքում (նման առաջին հաշվետվությունը պետք է տրամադրվի նախագծման փուլի մեկնարկից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում), (ii) եռամսյակային հաշվետվություններ շինարարական փուլի ընթացքում յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 30 օրվա ընթացքում (այդպիսի առաջին հաշվետվությունը պետք է տրամադրվի ոչ ուշ, քան աշխատանքների մեկնարկի վերաբերյալ Առարկության բացակայության հրապարակումից 3 ամիս հետո), և (iii) տարեկան հաշվետվություններ գործառնական փուլի ընթացքում զեկուցվող տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում (այդպիսի առաջին հաշվետվությունը պետք է տրամադրվի ոչ ուշ, քան Աշխատանքների մեկնարկի վերաբերյալ Առարկության բացակայության հրապարակումից 12 ամիս հետո) Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին, ԲՍԳԾ և Բնապահպանական և սոցիալական քաղաքականության PR նպատակներին Ծրագրի համապատասխանության վերաբերյալ:

(2) կառավարման խորհրդատուի աջակցությամբ, պետք է Բանկին ներկայացնի եռամսյակային հաշվետվություններ Սիսիան-Քաջարան ճանապարհի հյուսիսային և Բարգուշատի թունելի հատվածների՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի և Բնապահպանական և սոցիալական քաղաքականության նպատակներին համապատասխանության վերաբերյալ եռամսյակային կտրվածքով:

(գ) Ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Վարկառուն պետք է ներկայացնի Ստանդարտ պայմանների 4.04 կետի ա) և շ) կետերով սահմանված Ծրագրի կիսամյակային հաշվետվություններ հաշվետու ժամանակահատվածի ավարտից 45 օրվա ընթացքում մինչև ծրագրի ավարտը: Այդ հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ առանձնահատկությունները.

(1) Հետևյալ ընդհանուր տեղեկատվությունը:

(Ա) Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում և մինչև հաշվետվության ներկայացման օրն ընկած ժամանակահատվածը ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված ֆիզիկական առաջընթացը,

(Բ) Ծրագրի իրականացման ընթացքում ծրագրի փաստացի կամ ակնկալվող բարդություններն ու ուշացումները և նրանց ազդեցությունները իրականացման ժամանակացույցի վրա, ինչպես նաև փաստացի արված կամ պլանավորված քայլերը ուղղված այդ դժվարությունների հաղթահարմանն ու ուշացումներից խուսափելուն,

(Գ) Ծրագրի փակման ամսաթվի ակնկալվող փոփոխությունները,

(Դ) Ծրագրի իրականացման գրասենյակի, խորհրդատուների կամ կապալառուների անձնակազմերի առանցքային աշխատակիցների փոփոխությունը,

(Ե) Ծրագրի արժեքի վրա ազդեցություն ունեցող գործոնները, և

(Զ) Ծրագրի կամ ծրագրի որևէ մասի տնտեսական կենսունակության վրա ազդեցություն ունեցող ցանկացած զարգացումը կամ գործողությունը:

(2) Առաջընթացի գրաֆիկ, որը հիմնված է Ծրագրի իրականացման պլանի վրա և, որը ցույց է տալիս Ծրագրի յուրաքանչյուր բաժնի առաջընթացը՝ ներառելով պլանավորված և փաստացի ծախսերի վերաբերյալ գրաֆիկները:

(3) Ֆինանսական հաշվետվություններ, որոնք կարտացոլեն Ծրագրի յուրաքանչյուր մասի ներքո իրականացվող ծախսերի ու մասհանումների մանրամասները, որը կզուգակցվի հաշվետվության հետ՝ արտացոլելով ներքոգրյալը.

(Ա) սկզբնական նախահաշիվը;

(Բ) առկայության դեպքում լրամշակված նախահաշիվը՝ ներառելով փոփոխությունների պատճառները;

(Գ) սկզբնական գնահատված նախահաշիվ և տվյալ օրվա դրությամբ փաստացի ծախսերը;

(Դ) տվյալ օրվա դրությամբ փաստացի և նախատեսված ծախսերի տարբերությունների պատճառները; և

(Ե) տարվա մնացած եռամսյակների համար գնահատված ծախսերը:

(4) Սույն համաձայնագրի յուրաքանչյուր վավերապայմանի համապատասխանության կարգավիճակի համառոտ նկարագիր:

(ե) Անմիջապես այն դեպքում, երբ Վարկառուին կամ Ծրագրին առնչվող ցանկացած դեպքի առաջացման պարագայում վերջինս էական ազդեցություն կունենա բնապահպանության, աշխատակիցների, կամ հանրային կամ աշխատանքային առողջապահության կամ անվտանգության վրա, Վարկառուն պետք է Բանկին տեղեկացնի այդ մասին՝ նշելով նաև վերջինս բնույթն ու նախատեսվող քայլերը: Այն դեպքում, երբ դեպքը պարունակում է զգայուն/գաղտնի տեղեկատվություն անհատի մասին և հետապնդման ռիսկ կա, ապա այդ տեղեկատվությունը չպետք է պարունակի ներգրավված անձի վերաբերյալ անձնական տվյալներ: Առանց սահմանափակվելով վերոնշյալ ընդհանուր դրույթներով,

(1) Ծրագրին առնչվող որևէ դեպք, եթե այն առաջանում է Ծրագրին անմիջականորեն առնչություն ունեցող որևէ վայրում կամ առաջանում են Ծրագրի հետ առնչություն ունեցող աշխատակիցների, սարքավորումների, ավտոմեքենաների կամ նավերի պատճառով (անկախ նրանից, թե Ծրագրի շրջանակներում ինչի համար են օգտագործվել և արդյոք օգտագործվել են լիազորված, թե չլիազորված անձանց կողմից);

(2) Դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի կամ հանրային և աշխատանքային առողջապահության և անվտանգության վրա, եթե.

(Ա) ցանկացած կիրառելի օրենք պահանջում է նման միջադեպի մասին ծանուցում ցանկացած կառավարման մարմնին,

(Բ) նման միջադեպը ճակատագրական է որևէ մեկի համար ( անկախ նրանից այդ անձնավորությունը վարձված է Վարկառուի կողմից, թե ոչ),

(Գ) մեկից ավելի անձինք ստացել են լուրջ վնասվածքներ և ենթակա են հոսպիտալացման (անկախ նրանից այդ անձինք վարձված են Վարկառուի կողմից, թե ոչ),

(Դ) նման միջադեպը կապված է բռնության, շահագործման, բուլինգի, ահաբեկման կամ շահագործման այլ ձևերի հետ, ներառյալ գենդերային բռնությունը,

(Ե) նման միջադեպը կապված է բռնի կամ երեխաների աշխատանքային շահագործման հետ՝ Ծրագրի առնչությամբ, կամ

(Դ) այդ միջադեպը դարձել է կամ կարող է դառնալ հանրությանը հասանելի տեղեկատվություն մեդիա ծածկույթի կամ այլնի միջոցով:

(զ)Վարկառուն Բանկին անմիջապես պետք է տեղեկացնի աշխատակիցների կամ հանրության անդամների կողմից որևէ նշանակալից բողոքի կամ պահանջի մասին, որն ուղղված է և կապված է Վարկառուի և Ծրագրի հետ և որը կարող է էական ազդեցություն ունենալ Վարկառուի կամ Ծրագրի վրա և կարող է դառնալ հանրությանը հասանելի տեղեկատվություն մեդիա ծածկույթի կամ այլնի միջոցով: Այդ ծանուցումից 10 օրվա ընթացքում Վարկառուն պետք է ներկայացնի Բանկի համար ընդունելի հաշվետվություն՝ մանրամասնելով Վարկառուի ուսումնասիրության արդյունքները վերոնշյալ բողոքի դեպքի առնչությամբ, ինչպես նաև Վարկառուի կողմից բողոքում բարձրացված հարցերի լուծմանն ուղղված ձեռնարկված կամ ձեռնարկվելիք քայլերի նկարագրությունները:

## ՀՈԴՎԱԾ IV – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

### Բաժին 4.01. Ֆինանսական հաշվառում և հաշվետվություններ

(ա) Վարկառուն պետք է Ծրագրի իրականացման (կամ Ծրագրի ցանկացած մասի) պատասխանատու հանդիսացող Վարկառուի համապատասխան մարմինների կամ ստորաբաժանումների միջոցով շարունակաբար իրականացնի գործընթացներ, վարի հաշվառումներ և հաշիվներ որոնք, միջազգայնորեն ընդունված հաշվապահական ստանդարտներին համապատասխան, ստույգ կարտացոլեն Ծրագրին առնչվող գործողությունները, ռեսուրսները և ծախսերը և հնարավորություն կունենան մշտադիտարկելու և արձանագրելու Ծրագրի առաջընթացը (ներառյալ ծախսերն ու ստացվելիք օգուտները):

(բ) Վարկառուն պետք է.

(1) ապահովի, որ Բաժին 4.01-ում (Ծրագրի հաշիվներին վերաբերող) նշված գրառումները և հաշիվները յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար և մինչև Ծրագրի ավարտը (ինչպես Բանկի կողմից Վարկառուին ծանուցվել է) աուդիտի ենթարկվեն անկախ աուդիտորների կողմից, որոնք ընդունելի են Բանկի համար՝ միջազգային ընդունված աուդիտի սկզբունքներին և ստանդարտներին համապատասխան.

(2) հնարավորինս շուտ, բայց ամեն դեպքում, ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից վեց ամիս հետո, Բանկին տրամադրի աուդիտորների կողմից նման ծավալի և մանրամասն հաշվետվություն, որը Բանկը կարող է ողջամտորեն պահանջել և

(3) Բանկին տրամադրի այնպիսի այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են նման գրառումներին և հաշիվներին, ինչպես նաև դրանց աուդիտին, որոնք Բանկը ժամանակ առ ժամանակ կարող է ողջամտորեն պահանջել:

## ՀՈԴՎԱԾ V – ԿԱՍԵՑՈՒՄ, ԱՐԱԳԱՑՎԱԾ ՄԱՐՈՒՄ

### Բաժին 5.01. Կասեցում

Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի ա) և ծ) կետերի նպատակով սահմանված են հետևյալները.

ա) Բանկի կողմից գրավոր համաձայնության պարագայից այլ դեպքերում Վարկառուի տարածքում տրանսպորտի ոլորտին առնչվող օրենսդրական և կանոնակարգող շրջանակը պետք է փոփոխվի, կասեցվի, չեղյալ հայտարարվի, ուժը կորցրած ճանաչվի կամ բացարկվի, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ծրագրի վրա կամ Ծրագրի կամ Իրականացնող գործակալության կարողության վրա՝ իրականացնել Ծրագիրը կամ կատարել Վարկառուի պարտավորություններից որևէ մեկը սույն Համաձայնագրով;

բ) Վարկառուն կամ իրականացնող գործակալությունը ծախողվել է սույն Համաձայնագրի՝ իր պարտավորությունների կատարման հարցում Ծրագրի իրականացման համատեքստում:

(գ) Համաֆինանսավորման Համաձայնագիրը ցանկացած պատճառով կասեցվել է Համաֆինանսավորողի և Վարկառուի միջև դրա ստորագրումից հետո:

### Section 5.02. Արագացված մարում

Ստանդարտ պայմանների 7.06 բաժնի զ) ենթակետի նպատակով սահմանված է հետևյալը.

(ա) 4.01 բաժնի ա)-ից գ) նկարագրված ցանկացած գործողություն պետք է անվերապահորեն առաջանա և շարունակվի 30 օր Բանկի կողմից Վարկառուին տրվող ծանուցումից սկսած:

## ՀՈԴՎԱԾ VI – ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելու համար սահմանված վավերապայմանները**

Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի գ) ենթակետի նպատակների համար սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար որպես լրացուցիչ նախապայման սահմանված է հետևյալը.

ա) Սույն Համաձայնագրին համապատասխան և Բանկի կողմից ընդունելի համարվող Ծրագրի իրականացման գրասենյակը պետք է ստեղծվի:

**Բաժին 6.02. Իրավաբանական կարծիք**

Ստանդարտ պայմանների 9.03 բաժնի ա) ենթակետի նպատակով իրավաբանական կարծիքը կամ կարծիքները Վարկառուի անունից պետք է տրվեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից:

**Բաժին 6.03. Ուժի մեջ մտնելու ճախողման կասեցում**

Սույն համաձայնագրի ստորագրման օրվանից 360 օրը հանդիսանում է Ստանդարտ պայմանների 9.04 բաժնի նպատակների համար սահմանված ժամկետ:

## ՀՈԴՎԱԾ VII – ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**ԲԱԺԻՆ 7.01. Ծանուցումներ**

(ա) Հետևյալ հասցեները սահմանվում են Ստանդարտ Պայմանների 10.01 բաժնի նպատակների կիրառման համար, բացառությամբ այն ծանուցման, որը պետք է առաքվի կամ առձեռն, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային փոստով pdf կամ նմանատիպ ֆորմատով.

Վարկառուի համար:

Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

Ուղղված: Ֆինանսների նախարարին

Էլ.փոստ: secretariat@minfin.am

ՎԶԵԲ-ի համար:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
5 Բանկի փողոց
Լոնդոն E14 4BG
Միացյալ Թագավորություն

Ուղղված: Բանկային ծառայությունների վարչություն/ Գործառնություն No. 51293

Հեռախոս: +44 20 7338 6000
Էլ.փոստ: BankingServices@ebrd.com

(բ) Բանկը կարող է Վարկառուին հրավիրել գրանցվելու և օգտագործելու ClientNet համակարգը կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ ձև, և, եթե Վարկառուն և Բանկը համաձայնվում են օգտագործել ClientNet համակարգը կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ ձև, ցանկացած ծանուցում, դիմում կամ հաղորդակցում Վարկառուից Բանկին և Բանկից Վարկառուին (բացի ցանկացած ծանուցումից, դիմումից կամ հաղորդակցության ձևից, որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրով, պետք է լինի բնօրինակ, հաստատված օրինակ և թղթային օրինակ), կարող են տրվել ClientNet համակարգի պայմաններին համապատասխան կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ ձևերով, ինչպես նաև տրվել փոստի միջոցով:

(գ) Ցանկացած ծանուցում, դիմում կամ հաղորդակցում, որը ստացվել է առձեռն, օդային փոստով, ֆաքսով կամ ClientNet համակարգի միջոցով կամ այլ էլեկտրոնային հաղորդակցման ձևով ուժի մեջ է լինելու միայն ստանալու պահին ընթեռնելի ձևով լինելու

պարագայում, ապահովելով, որ 17.00-ից հետո ստացված ցանկացած ծանուցում, դիմում կամ այլ հաղորդակցություն ուժի մեջ է հաջորդ օրը:

(դ) Ստորև ներկայացված են Վարկառուի կողմից լիազորված անձանց ցանկը անուններով, պաշտոններով և էլեկտրոնային հասցեներով, որոնք հանդիսանում են Վարկառուի առաջնային կոնտակտային անձինք ClientNeth առնչությամբ Բանկի կողմից ցանկացած հրավերի նպատակով:

| ***Անուն*** | ***Պաշտոն*** | ***Էլ.փոստ*** | ***Լեզու – Անգլերեն, Ռուսերեն, Ֆրանսերեն*** |
|---|---|---|---|
| Սամվել Խանվելյան | Պետական պարտքի կառավարման վարչության պետ | samvel.khanvelyan@minfin.am | |
| Մարինե Մելիքյան | Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ | marine.melikyan@minfin.am | |
| Նաիրա Գրիգորյան | Պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ | naira.grigoryan@minfin.am | |
| Մարինե Հարությունյան | Պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ | marine.harutyunyan@minfin.am | |

ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ ՎԵՐՈՆՇՅԱԼԸ, սույն փաստաթղթի կողմերը, գործելով իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը չորս օրինակից և

հանձնեցին այն Երևանում, Հայաստանի Հանրապետությունում, վերը նշված ամսաթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

/ստորագրություն/
Անուն՝ Վահե Հովհաննիսյան
Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

/ստորագրություն/
Անուն՝ Նանդիտա Պարշադ
Պաշտոն՝ Կառավարիչ տնօրեն

# ՀԱՎԵԼՎԱԾ 1 -ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Ծրագրի նպատակը Վարկառուին աջակցելն է՝ կառուցելու Սիսիան-Քաջարան ճանապարհի հարավային հատվածը, որը հյուսիսային հատվածի և Բարգուշատի թունելի հետ միասին (Սիսիան-Քաջարան ճանապարհ) կազմում է միջազգային ՀՀՃՄ-ի մասը:

2. Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից, որոնք ենթակա են փոփոխման ժամանակ առ ժամանակ՝ համաձայնեցված լինելով Բանկի և Վարկառուի կողմից.

Մաս Ա: Սիսիան-Քաջարան Ճանապարհի հարավային հատվածի կառուցում (Նախագծման փուլ)

Մաս Բ: Սիսիան-Քաջարան Ճանապարհի հարավային հատվածի կառուցում (Շինարարության փուլ)

Մաս Գ: Ինժեներական վերահսկողություն

Մաս Դ: Ծրագրի կառավարման խորհրդատու

3. Ծրագիրը կօգտվի ՏՀ-ի միջոցներից՝ աջակցելու Ծրագրի իրականացմանը, և որի միջոցները պետք է ֆինանսավորեն ՏՀ-ի ֆինանսավորվող խորհրդատուների՝ Բանկի կողմից ներգրավումն ու նշանակումը:

4. Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2032թ. նոյեմբերը:

# ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Հավելվածին կցված աղյուսակը սահմանում է կատեգորիաները, յուրաքանչյուր կատեգորիային հատկացվող վարկի գումարը և յուրաքանչյուր կատեգորիայից ֆինանսավորվող ծախսերի տոկոսային բաժինը:

2. Այնուամենայնիվ, չնայած վերևում նշված 1-ին պարբերությանը, մասհանում չի կարող կատարվել հետևյալ դեպքերում,

[(ա)] Վարկային համաձայնագրի ստորագրումից առաջ կատարված ծախսերը, և

(բ) Ծրագրի Մաս Ա-ի ներքո կատարվող ծախսերը (բացի միանվագ կոմիսիոն վճարից) մինչև

(1) աշխարհագրական վտանգների գնահատման մասին կամերալ ուսումնասիրությունը ավարտված լինի,

(2) Ծրագրի վերահսկող ինժեները նշանակված լինի Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքի հիման վրա,

(3) Ծրագրի կառավարման խորհրդատուն նշանակված լինի Բանկի կողմից ընդունելի ձևով և ընդունելի տեխնիկական առաջադրանքի հիման վրա,

(4) Համաֆինանսավորման համաձայնագիրը իրագործված է և առաքված և ուժի մեջ մտնելու բոլոր նախապայմանները կամ Վարկառուի՝ մասհանումներ կատարելու բոլոր իրավունքները, բացի միայն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց, կատարված են:

(գ) Ծրագրի Մաս Բ-ի ներքո կատարվող ծախսերը (բացի միանվագ կոմիսիոն վճարից) մինչև

(1) Բանկի կողմից բավարար համարվող ձևով և բովանդակությամբ ապացույց, որ Փոխկապակցված հատվածների կառուցման համար անհրաժեշտ գումարները առկա են, ներառյալ մասնավորապես Սիսիան-Քաջարան ճանապարհի հյուսիսային հատվածը և Բարգուշատի թունելը և ներկայացված են Բանկին,

(2) Մնացորդների տեղակայման տարածքները համաձայնեցվել և հաստատվել են Վերահսկող ինժեների կողմից, և բոլոր պահանջվող թույլտվությունները կամ տեղական հաստատումները ձեռք են բերվել Բանկի կողմից առանց առարկության հետ մեկտեղ,

(3) Ծրագրի կառավարման խորհրդատուի աջակցությամբ Փոփոխությունների կառավարման պլանը պետք է պատրաստված լինի, այդ պլանը պետք է լինի Բանկի կողմից բավարար ձևով և բովանդակությամբ: Փոփոխությունների կառավարման պլանը պետք է կիրառելի լինի նախագծման փաստաթղթերում նյութերի փոփոխության պարագայում Բնապահպանական և Սոցիալական Ազդեցության Գնահատման տարածական ծածկույթից դուրս, ինչպես նաև այդ փոփոխությունը պետք է պահանջի ցուցադրում և հնարավոր է լինի լրացուցիչ բնապահպանական և սոցիալակն գնահատման առարկա,

(4) կենսաբազմազանության՝ կառուցմանը նախորդող ուսումնասիրությունները կատարված են համաձայն Կենսաբազմազանության պլանի և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի,

(5) աշխարհագրական վտանգների գնահատման արդյունքները հայտնի են և պահանջվող նախագծման փոփոխությունները (եթե այդպիսիք կան) ներառված են Շինարարության փուլի մեկնարկին նախորդող Ծրագրի վերջնական նախագծում, և

(6) Բանկի կողմից բավարար համարվող ձևով և բովանդակությամբ ապահովվել է, որ նախագծումը ավարտված է և պատշաճ կերպով ընդունված, ներառում է ճանապարհային անվտանգության առաջարկությունները և երկրաբանական վտանգի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև կլիմայի կայունության ապահովման միջոցները, Կլիմայի Ադապտացման Հաշվետվությունում (պատրաստված համակողմանի գնահատման փուլում) ներառված արդյունքները, ներառյալ, բայց չսահմանափակվելով ջրահեռացման և ասֆալտի հաստությամբ::

**Հավելված 2-ի առդիր**

## Վարկ

| **Կատեգորիա** | **Վարկի գումարը՝ տրամադրված վարկի արժույթով** | **Ֆինանսավորվելիք ծախսերի տոկոսը** |
|---|---|---|
| (1) Ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ Ծրագրի Ա, Բ, Գ և Դ մասերի համար | 233,640,000 | Պայմանագրի արժեքի մինչև 100 %, հարկերը չներառած |
| (2) Միանվագ կոմիսիոն վճար | 2,360,000 | 100% |
| **Ընդհանուր** | **236,000,000** | |

# ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | **Բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում (ՎԶԵԲ ԻՊ1)** | | | | | |
| 1.1 | Մշակել և իրագործել Ծրագրի **համապարփակ բնապահպանական, առողջության և անվտանգության և սոցիալական կառավարման համակարգը (ԲՍԿՀ) (այսպես կոչված «Ծրագրի ԲՍԿՀ)**, ներառյալ.<br>• Բնապահպանական, առողջության և անվտանգության և սոցիալական քաղաքականությունը,<br>• Կազմակերպչական կառուցվածքի մանրամասները և գծապատկերը,<br>• Կապալառուի և մատակարարի կառավարման ընթացակարգը (ԲևՍ, ներառյալ առողջություն և անվտանգություն արդյունավետությունը կառավարելու համար),<br>• Շրջանակային Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿՊ),<br>• ԲևՍ մշտադիտարկման և հաշվետվողականության շրջանակը (ներառյալ ԲՍԿՊ-ի ԲևՍ | ԲևՍ բոլոր ռիսկերն ու օգուտները:<br>ԲևՍ կառավարման համակարգում և օպտիմալացում: | ՎԶԵԲ ԻՊ1<br>Լավագույն միջազգային գործելակերպ | ՃԴ-ն ԾԿԽ-ի և Վերահսկող ինժեների հետ | ԲՍԿՀ-ի մշակում՝ նախքան շինարարական կապալառուի մոբիլիզացումը:<br><br>Իրականացում՝ շինարարության ընթացքում՝ կապալառուների համա-պատասխանության վերանայման միջոցով, այնուհետև իրականացում Ծրագրի գործունեության ընթացքում: | Համապատասխան փաստաթղթերը մշակվել և ընդունվել են:<br><br>Փոփոխությունների կառավարման կարգն ընդունված է՝ ՎԶԵԲ կողմից հաստատվելուց հետո: Էական փոփոխությունների մասին զեկուցվել է ՎԶԵԲ-ին՝ համաձայնություն ստանալու համար:<br><br>ԲՍԿՀ-ի իրագործում, մշտադիտարկում և վերանայում/թարմացում, ըստ անհրաժեշտության:<br>Ընթացիկ հաշվետվություններ: |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | մշտադիտարկման պլանը),<br>• Անհամապատասխանությունների, բողոքների և միջադեպերի լուծման ընթացակարգեր,<br>• Փոփոխությունների կառավարման ընթացակարգը՝ ապահովելու համար, որ Ծրագրի սկզբնական նախագծման, հզորության, տեղակայման կամ գործընթացի տեխնոլոգիայի ցանկացած փոփոխություն ենթակա է բնապահպանական և սոցիալական գնահատումների, իսկ նոր ազդեցությունները պատշաճ կերպով կարծագանքվեն և կմեղմացվեն՝ ՎԶԵԲ ԲևՍ պահանջներին համապատասխան: Ցանկացած էական փոփոխություն դեպքում կպահանջվի ՎԶԵԲ-ից ստանալ համաձայնություն,<br>• Շահառուների ներգրավման պլան և բողոքարկման մեխանիզմ (տես Միջոցառում 8.1):<br><br>Ծրագրի ԲՍԿՀ-ը և ԲՍԿՊ-ը ինտեգրել կապալառուների միջև՝ պայմանագրային պարտավորեցնելով Կապալառուին իրագործել Ծրագրի ԲՍԿՀ-ը: Հստակ սահմանել դերերը և պատասխանատվությունը՝ ԲՍԿՀ-ի և ԲՍԿՊ-ի իրականացման համար:<br>Շինարարության ընթացքում համապատասխան պահանջները պետք է | | | | | |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | դարձնել կապալառուների պատասխանատվությունը, որը վերահսկվում է ԾԿԻՍ-ի և Վերահսկող ինժեների կողմից, իսկ շահագործման փուլում՝ ՃԴ-ի կողմից:<br>*[Նշում՝ համակարգը(երը) ընդհանուր առմամբ պետք է բավարարեն ISO14001 և ISO 45001 ստանդարտների նպատակներին, սակայն ոչ սերտիֆիկացված լինեն:* | | | | | |
| 1.2 | Իրագործել Ծրագրի ԲՍԿՀ-ը, ներառյալ քաղաքականությունը, ընթացակարգերը և մեղմացման միջոցառումներն ու պահանջները, որոնք ներառված են Ծրագրի ԲՍԿՊ-ում:<br>Մշակել և իրականացնել **շինարարության փուլի Հատուկ ԲՍԿՊ-երը (ՀԲՍԿՊ)**՝ համապատասխանեցնելով ՎԶԵԲ-ի պահանջներին, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալ փաստաթղթերով՝<br>• Օդի որակի կառավարման պլան,<br>• Հողի բերրի շերտի կառավարման պլան,<br>• Թափոնների կառավարման պլան (ներառյալ Հողային հանույթի տեղադրման ենթապլանը),<br>• Էրոզիայի վերահսկման պլան,<br>• Շեպերի կայունացման պլան (պահանջվում է գեո-վտանգների ռիսկերի գնահատմամբ, տես Միջոցառում 4.3-ը),<br>• Կեղտաջրերի և հեղեղաջրերի | Շինարարության ընթացքում Ծրագրի ԲԱՍ-ի, ներառյալ առողջության և անվտանգության, ռիսկերի և ազդեցությունների նվազեցում | ՎԶԵԲ ԻՊ 1-6 և 8<br><br>Լավագույն միջազգային գործելակերպ<br><br>Ազգային օրենսդրություն | Կապալառուն մշակում է ՀԲՍԿՊ-ները<br>Կապալառուն (և իր ենթակապալա-ռուները) իրագործում են ՀԲՍԿՊ-ները<br>Վերահսկող ինժեները հաստատում է ՀԲՍԿՊ-ները<br>ԾԿԻՍ-ն հաստատում է շրջանակային ԲՍԿՊ-ին համապատասխանությունը<br>ՃԴ-ը տալիս է իր համաձայնությունը | Մշակել մինչև շինարարության մեկնարկը:<br><br>Կապալառուն ներկա-յացնում է ԲՍԿՀ-ը ու ՀԲՍԿՊ-երը ՃԴ-ին և Վերահսկող ինժեներին շինարարական աշխատանքների մեկնարկից առնվազն 30 օր առաջ, Վերահսկող ինժեները հաստատում է, իսկ ՃԴ-ն համաձայնեցնում է դրանք մինչև շինարարության մեկնարկը:<br><br>Դեմոբիլիզացման պլանի համար՝ | Կապալառուի հետ պայմանագիրը հաստատվել է ՎԶԵԲ-ի կողմից, որին կցվում է Ծրագրի ԲՍԿՊ-ը:<br><br>Կապալառուի ԲՍԿՀ-ը և ՀԲՍԿՊ-ը հաստատվել են Վերահսկող ինժեների և ԾԿԻՍ-ի միջոցով ՃԴ-ի և կողմից և այնուհետև իրագործվել է:<br><br>Մշտադիտարկման հաշվետվություններ Վերահսկող ինժեների և կապալառուի կողմից:<br><br>Մշտադիտարկման արդյունքները՝ ԲԱՍ մշտադիտարկումների |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | կառավարման պլան,<br>• Աղմուկի և թրթռումների կառավարման պլան (ներառյալ պայթեցումների կառավարման պլանը),<br>• Արտահոսքերի կառավարման պլան,<br>• Վտանգավոր նյութերի կառավարման պլան,<br>• Թունելային ջրերի կառավարման պլան (ներառյալ ստորերկրյա ջրերի հեռացումը թունելներից),<br>• Երթևեկության կառավարման պլան (ներառյալ ճանապարհային աուդիտ և վիճակի հետազոտություն, ճանապարհների ժամանակավոր ենթապլաններ և մուտքի և տեղական կապի պլան),<br>• Համայնքի, առողջության և աշխատանքի անվտանգության պլան,<br>• Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան (որպես աշխատողների բնակեցման պլանի ենթապլան և աշխատողների բողոքարկման մեխանիզմ),<br>• Աշխատողների վարքագծի կանոններ,<br>• Պատմամշակութային ժառանգության կառավարման պլան,<br>• Պատահական գտածոների ընթացակարգ,<br>• Արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման | | | Վերահսկող ինժեները և ՃԴ-ն մշտադիտարկում են ՀԲՍԿՊ-ի արդյունավետու-թյունը: | ընդունում շինարարության առաջին 6 ամիսների ընթացքում:<br>Իրականացում - շինարարության ընթացքում: | հաշվետվությունների տեսքով ներկայացված է ՎԶԵԲ-ին: |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | պլան,<br>• Ինվազիվ տեսակների կառավարման պլան (ինչպես նշված է Կենսաբազմազանության միջոցառումների պլանում),<br>• Ռեկուլտիվացման/հողերի վերականգնման պլան (ժամանակավոր օգտագործվող տեղամասերի համար),<br>• Շինարարական ճամբարի կառավարման պլան (հիմնված բնակեցման տարբերակների ռիսկի գնահատման վրա),<br>• Բետոնի գործարանի կառավարման պլան,<br>• Ասֆալտի գործարանի կառավարման պլան,<br>• Գնումների պլան,<br>• Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման պլան,<br>• Դեմոբիլիզացման պլան,<br>• Ծրագրի համար աշխատուժի հավաքագրման քաղաքականություն,<br>• Հավաքագրման պլան:<br><br>Վերանայել վերը նշված պլանները՝ հիմնվելով լրացուցիչ ԲևՍ գնահատումների, ուսումնասիրությունների, մշտադիտարկման արդյունքների և այլնի վրա: Վերանայված տարբերակները նույնպես պետք է հաստատվեն Վերահսկող ինժեների կողմից և ստանան ՃԴ-ի համաձայնությունը՝ ԾԿԽ-ի | | | | | |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | կողմից շրջանակային ԲՍԿՊ-ի համապատաս-խանությունը հաստատելուց հետո: | | | | | |
| 1.3 | Ապահովել, որ ենթակապալառուները համապատասխանում են ՎԶԵԲ-ի նույն կիրառելի չափանիշներին և հետևում են Կապալառուի կողմից մշակված ԲՍԿՍ-ի և շինարարական ՀԲՍԿՊ-երի պահանջներին, հետևյալի միջոցով՝<br>i) ներառելով հատուկ դրույթները Կապալառուի պայմանագրի մեջ, և<br>ii) ներառելով հատուկ դրույթները ենթակապալառուների հետ բոլոր պայմանագրերում: | Շինարարության ընթացքում Ծրագրի ԲևԱ-ի, ներառյալ առողջության և անվտանգության, ռիսկերի և ազդեցությունների նվազեցում | ՎԶԵԲ ԻՊ1 | i) ՃԴ հաստատում է, որ պայմանա-գրային կարգավո-րումները կատարված են:<br>ii) Կապալառուն մշտադիտարկում է այդ պահանջների իրագործումը ենթակապալառու-ների կողմից: | i) Մինչ պայմանագրի ստորագրումը:<br>ii) Շինարարության փուլում՝ մինչ հատուկ ենթապայմանագրերի ստորագրումը: | i) Հատուկ դրույթները ներառված են Կապալառուի՝ ՃԴ-ի հետ պայմանագրերում:<br>ii) Հատուկ դրույթներ, որոնք ներառված են Կապալառուի հետ պայմանագրերում և կապալառուների մշտադիտարկման հաշվետվություններում: Կապալառուի հավաստումը, որ իրենց ենթակապալառուներն ունեն ԲՍԿՀ և բավարար կարողություններ՝ ԲՍԿՀ-ը իրագործելու համար և ԲՍԿՊ-ի պահանջները՝ համաձայն Կապալառուի հիմնական պայմանագրի դրույթների: |
| 1.4 | i) Մշակել **կազմակերպչական կառուցվածքի շրջանակ** ԲևԱ (ներառյալ առողջություն և անվտանգություն) գործառույթների համար, ներառյալ դերերն ու պարտականությունները ՃԴ-ի շրջանակներում, հաղորդակցման շրջանակը (ՃԴ-ի, ԾԻԳ-ի և կապալառուների | Ծրագիրը կիրառելի չափանիշներին համապատասխան իրականացնելու կարողություն: | ՎԶԵԲ ԻՊ1 | ՃԴ | I-ին և ii-րդ՝ մինչ աշխատանքների մրցույթը: | i) Ընդունված և իրագործված կազմակերպչական շրջանակը, |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | միջև) և որոշումների կայացման գործընթացի նկարագրությունը:<br>ii) ՃԴ-ն ապահովում է, որ ՃԴ-ը կունենա բավարար անձնակազմ (առնվազն երեք մասնագետ՝ բնապահպանական, ներառյալ ԱԱ, սոցիալական և շահառուների ներգրավվածության (տես նաև Միջոցառում 8.2-ը)) ազգային և միջազգային ԲևԱ չափանիշների համապատասխան իրավասություններով՝ Ծրագրի իրականացման համար:<br>iii) ՃԴ-ն ապահովում է, որ Կապալառուն կունենա բավարար անձնակազմ ՝Ծրագրի իրականացման համար և համապատասխան ազգային և միջազգային ԲևԱ ստանդարտների իմացությամբ, որն օժտված է լինելու հատուկ դերերով բնապահպանական, սոցիալական պաշտպանության և տարաբնակեցման, կենսաբազմազանության (տես նաև Միջոցառում 6.2-ը), պատմամշակութային ժառանգության և համայնքային առողջության ու աշխատանքի անվտանգություն (կախված աշխատողների թվից) ոլորտներում:<br>iv) Ապահովել, որ Վերահսկող ինժեները կունենա բավարար անձնակազմ՝ Ծրագրի իրականացման համար և համապատասխան ԲևԱ ստանդարտների իմացությամբ (ներառյալ՝ միջազգային բնապահպանական | Որոշումների կայացման հստակ և արդյունավետ գործընթացներ: | | | iii-րդ և iv-րդ պայմանագրի կնքման ընթացքում: | ii) ՃԴ-ի անձնակազմը, որը պատշաճ կերպով ծածկում է անհրաժեշտ իրավասությունները և կարող է տեղում կառավարել կապալառուներին,<br>iii) Համապատասխան փորձառությամբ Կապալառուի խումբ,<br>iv) Համապատասխան փորձառությամբ Վերահսկող ինժեների խումբ: |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | ու աշխատանքի անվտանգության փորձագետի և ազգային շրջակա միջավայրի, սոցիալական, տարաբնակեցման, կենսաբազմազանության, պատմամշակութային ժառանգության, համայնքային առողջության ու աշխատանքի անվտանգություն մասնագետների համատեղ ներկայությամբ): | | | | | |
| 1.5 | Իրականացնել **տարածքի ընտրություն, ԲևՍ հետազոտություններ, գնահատում և նախագծման աշխատանքներ** Հողային Հանույթի Տեղադրման Վայրերի (ՀՀՏՎ), դրանց մուտքի ճանապարհների, շինարարական ճամբարների, տեղակայման վայրերի, էլեկտրահաղորդման գծի, ջրամատակարարման և Ծրագրի այլ բաղադրիչների համար, որոնք ներկայումս հստակեցված չեն՝ ՇՄՍԱԳ-ում / ԲՍԿՊ-ում սահմանված առաջարկություններին համապատասխան:<br>Օբյեկտների տեղակայման վայրերը պետք է հաստատվեն Քաջարան համայնքի իշխանությունների, Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), Վերահսկող ինժեների և ՎԶԵԲ-ի կողմից՝ տեղական ազդակիր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններից հետո:<br>Միջոցառում 1.6-ի (գեո-վտանգի գնահատում) արդյունքները պետք է հաշվի առնվեն | ԲևՍ ազդեցությունների կառավարում, որոնք կապված են ՀՀՏՎ-ների և Ծրագրի այլ բաղադրիչների հետ և որոնց գտնվելու վայրը ներկայումս հստակեցված չէ | ՎԶԵԲ ԻՊ1<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն միջազգային գործելակերպ | Կապալառու՝ մշակում / իրականացում:<br>ՃԴ և Վերահսկող ինժեներ՝ վերանայում և հաստատում: | Նախքան կոնկրետ վայրերում շինարարության մեկնարկը | Լրացուցիչ ԲևՍ փաստաթղթեր, որոնք ներկայացված և հաստատված են ՃԴ-ի և ՎԶԵԲ-ի կողմից:<br>Եթե կիրառելի է, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություններ (կամ թույլտվություններ) ստացված ՇՄՆ-ից:<br>ՎԶԵԲ-ի կողմից բոլոր օբյեկտների գտնվելու վայրերի վերաբերյալ ստացված համաձայնություն: |

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | նախագծման ճշգրտումների և Ծրագրի վերը նշված բաղադրիչների տեղակայման ժամանակ, անհրաժեշտության դեպքում: | | | | | |
| 1.6 | Ավարտել լրացուցիչ և երկրաբանական վտանգի նույնականացումն ու գնահատումը: Անհրաժեշտության դեպքում թարմացնել Ծրագրի նախագիծը և Շեպերի կայունացման պլանը՝ հիմնվելով այս ուսումնասիրության արդյունքների վրա: | Ճանապարհային երթևեկության անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացում | | ՎԶԵԲ-ի կողմից վարձված անկախ տեխնիկական խորհրդատու: ՃԴ-ի և ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված ռեսուրսներ՝ արդյունքներն իրագործելու համար: | Մինչ շինարարության մեկնարկը<br><br>Պայմանագրի իրագործման փուլ՝ այսինքն նախագծման փուլում | Երկրատեխնիկական հաշվետվության և մանրամասն նախագծային փաստաթղթերը հաստատված են ՎԶԵԲ-ի, ՃԴ-ի և աջակցողի կողմից: Փոփոխությունների կառավարման գործընթացն ավարտված է, եթե անհրաժեշտ են էական փոփոխություններ՝ ՎԶԵԲ-ի կողմից հաստատմամբ: |
| 1.7 | Ստեղծել և պահել աշխատանքային վիճակում **բոլոր ԲևՍ-ի գրանցամատյանները, ներառյալ Ծրագրին առնչվող առողջություն պահպանման և աշխատանքի անվտանգություն գրառումները, թույլտվությունները և համաձայնագրերը**, ինչպես առաջարկվում է շրջանակային ԲՍԿՊ-ում, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. հողի բերրի շերտի հեռացման թույլտվությունները, ՇՄԱԳ եզրակացությունները[2], շինարարական թույլտվությունները, ջրառի | Համապատաս-խանություն ազգային կարգավորող և թույլտվությունների շրջանակին | Ազգային օրենսդրություն | ՃԴ-ը պայմանագրով պարտավորեցնում է Կապալառուին վարել գրանցամատյանը: Կապալառուն վարում է գրանցամատյանը: ԾՀԽ-ն և Վերահսկող | Պատրաստվում է նախքան շինարարության մեկնարկը և պահպանվում է Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում *(ՃԴ-ը վարում է գրանցամատյանը մինչ շահագործման փուլը)* | Թույլտվությունների գրանցամատյանը գործում է և շարունակաբար թարմացվում է: |

[2] Ի լրումն Ծրագրի մշակման ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության, որը ձեռք կբերվի ՃԴ-ի կողմից 2023 թվականի աշնանը

| No. | Միջոցառումը | Բնապահպանա-կան և սոցիալա-կան ռիսկեր (պար-տավորություններ / օգուտներ) | Պահանջներ (օրենսդրական, ՎԶԵԲ ստանդարտներ, լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխա-նատվություն | Ժամանակացույցը | Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար |
|---|---|---|---|---|---|---|
| | թույլտվությունները, անտառների մաքրումը (անհրաժեշտության դեպքում), քարհանքի մշակումը (անհրաժեշտության դեպքում), պայթեցման աշխատանքները, կեղտաջրերի սահմանային թույլատրելի արտահոսքերը և թույլտվությունները, թափոնների տեղադրման պայմանագրերը, մթնոլորտային օդի արտանետումների սահմանաքանակները և թույլտվությունը, աշխատանքի պաշտպանության և անվտանգության լիցենզիաները, պատմամշակութային ժառանգության միավորների տեղափոխման հետ կապված հաստատումները, ճանապարհի հետ հատվող ենթակառուցվածքների տեղափոխման հետ կապված հաստատումները: | | | ինժեները մշտադիտարկում են, որ գրանցամատյանը պատշաճ պահպանվի և թույլտվությունները առկա լինեն: | | |
| 1.8 | Ժամանակին ստանալ բոլոր պահանջվող թույլտվությունները, արտոնությունները և հաստատումները համապատասխան մարմիններից և պահպանել համապատասխանությունը դրանց պահանջներին և հաստատման պայմաններին: | Համապատաս-խանություն ազգային կարգավորող և թույլտվությունների շրջանակին: | Ազգային օրենսդրություն | Թույլտվությունները ստացվում են Կապալառուի կողմից | Ինչպես պահանջվում է ազգային կարգավորումներով | Համապատասխան թույլտվությունները և հաստատումները ստացված են: |
| 1.9 | Մշակել և իրականացնել **շինարարության փուլի մշտադիտարկման ծրագիր**՝ ապահովելու, որ ԲՍԿՊ-ում և ՀԲՍԿՊ-ներում նշված համապատասխան ազգային և միջազգային ստանդարտները պահպանվում են և ցուցադրել Կապալառուի ԲևՍ | Շինարարության փուլի համար մշակված մեղմացման միջոցառումների | ՎԶԵԲ ԻՊ1<br>Ազգային օրենսդրություն | Կապալառու<br>Վերահսկող ինժեներ՝ հաստատում | Մշակվում է մինչ շինարարության մեկնարկը:<br>Իրականացվում է Ծրագրի ողջ | Մշտադիտարկման ծրագիրը իրականացվում է: |

